**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №: 1**

**05.10.2021 թ. ԿՆՔՎԱԾ N: ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-21/25-1 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «26» « 10 » 2021 թ.

«Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա. Աբգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, «ԱՏԱՇԻՆ» ՍՊԸ -ը, ի դեմս տնօրեն Տ. Ապետնակյանի որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա այսուհետ՝ «Կապալառու» մյուս կողմից, այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 05.10.2021 թ կնքված ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-21/25-1 պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի (այսուհետև Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

**1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 1.3 կետն ընդունել հետևյալ խմբագրությամբ «Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2021 թ. նոյեմբերի 30-ը:

1.2 Հաստատել Պայմանագրով ծառայությունների մատուցման օրացուցային գրաֆիկը համաձայն N: 1 Հավելվածի:

**2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի N: 1 հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՊԱԼԱՌՈՒ** |
| --- | --- |
| ՀՀ ՏԿԵՆ ՋԿ «Ջրառ» ՓԲԸ<br>Երևան, Վարդանանց փակուղի 8<br>Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/6<br>h/h 2479000059160000, ՀՎՀՀ 00093621<br>Տնօրեն | «ԱՏԱՇԻՆ» ՍՊԸ<br>ՀՀ, ք. Երևան, Նոր Նորքի 9-րդ զ., 48/10<br>«Արարատբանկ» ՓԲԸ<br>h/h 1510031428830100, ՀՎՀՀ 00901734<br>Տնօրեն |
| ------------------------ Ա. ԱԲԳԱՐՅԱՆ<br>/ստորագրություն/<br>Կ.Տ. | ---------------------- Տ. ԱՊԵՏՆԱԿՅԱՆ<br>/ստորագրություն/<br>Կ.Տ. |

*Հավելված թիվ 1*
05 *նոյեմբերի 2021թ. կնքված*
*N: ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-21/25-1 պայմանագրի*
*№ 1 համաձայնագրի*

# ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
## ՄԱՐՄԱՐԻԿԻ ՋՐԱՄԲԱՐԻ ՊԱՏՎԱՐԻ ՎԵՐԻՆ ՇԵՊԻ ՔԱՅՔԱՅՎԱԾ ԵՐԿԱԹԲԵՏՈՆՅԱ ԵՐԵՍԱՐԿԻ ՔԱՅՔԱՅՎԱԾ ՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԿԱԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Մարմարիկի ջրամբարի պատվարի վերին շեպի երկաթբետոնյան երեսարկի քայքայված հատվածի մակերևույթի քանդում միջինը 13-15սմ խորությամբ, քանդած երկաթ-բետոնի թափոնների բարձում ձեռքի սայլակների վրա և տեղափոխում 40մ, թեքության վրա, Քանդված մակերևույթի մաքրում սեղմված օդով, 5Bp արմոցանցի, բջիջը 200x200մմ, տեղադրում | Պայմանագրի կնքման օր | 15.10.2021 թ. |
| 2 | Բետոնե ծածկույթի վերականգնում միաձույլ , B25, F150, W6 դասի բետոնե շաղախով, Միմյանցից 6 մ հեռավորությամբ երկայնական, լայնական կարերի վերականգնում | 16.10.2021 թ | 30.11.2021 թ |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ՏԿԵՆ ՋԿ «Ջրառ» ՓԲԸ
Երևան, Վարդանանց փակուղի 8
Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ
h/h 2479000059160000, ՀՎՀՀ 00093621
Տնօրեն

------------------------------ Ա. ԱՐԳԱՐՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«ԱՏԱՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Նոր Նորքի 9-րդ զ., 48/10
«Արարատբանկ» ՓԲԸ
h/h 1510031428830100, ՀՎՀՀ 00901734
Տնօրեն

------------------------------ Տ. ԱՊԵՏՆԱԿՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.